Հաստատված է
Շուշիի տեխնոլոգիական համալսարանի
Գիտական խորհրդի 2022թ.
հունիսի 27-ի N1-06/22/9 որոշմամբ:

Փոփոխությունը կատարվել է 2025թ. փետրվարի 26-ի
N1-02/25/1 որոշմամբ:

Գիտական խորհրդի նախագահ՝ Ն.Ա.Միքայելյան

«ՇՈՒՇԻԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՑՎԱԾՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՎԱԾ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

Հիմք ընդունելով «Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) առաքելությունն ու ռազմավարական ծրագիրը, միջազգային դրամաշնորհային, փոխանակման և այլ գիտակրթական ծրագրերի վերաբերյալ շահակիցների տեղեկացվածությունը բարձրացնելու նպատակով ներդնել հետևյալ մեխանիզմները.

- Միջազգային ծրագրերի վերաբեյալ տեղեկություն տարածելու նպատակով սոցիալական ցանցերի օգտագործում:
- Տեղական լրատվամիջոցների հետ համագործակցություն և Հիմնադրամի կողմից կազմակերպվող բոլոր միջոցառումների լուսաբանում:
- Հիմնադրամի տարբեր ստորաբաժանումների, դեպարտամենտների, Ֆակուլտետների, ամբիոնների հետ տեղեկատվական օրերի կազմակերպում:
- Միջոցառումների վերաբերյալ տեղեկության տարածում տեղեկատվական բուկլետների, բրոշուրների միջոցով:
- Խմբային կամ անհատական խորհրդատվության կազմակերպում ուսանողների հետ ծրագրի վերաբերյալ տեղեկություն տրամադրելու նպատակով **(Փոփ. կատ. են 26.02.2025թ., N1-02/25/1)**:

Միջազգային և այլ գիտական կրթական ծրագրերի վերաբերյալ շահակիցների տեղեկացվածության բարձրացման հիմնական նպատակներն են.

- Ուսանողների, պրոֆեսորադասախոսական և վարչական կազմի միջազգայնացման գործընթացներում ներգրավվածության բարձրացում:
- Ուսանողների պրոֆեսորադասախոսական և վարչական կազմի միջազգային դրամաշնորհային / փոխանակման և այլ ծրագրերին ակտիվ մասկացություն:

Միջազգային և այլ գիտական կրթական ծրագրերի վերաբերյալ շահակիցների տեղեկացվածության բարձրացման հիմնական խնդիրներն են.

- Տեղեկացվածության ցածր մակարդակ ուսանողների պրոֆեսորադասախոսական և վարչական կազմի միջազգային ծրագրերի վերբերյալ:

Միջազգային և այլ գիտական կրթական ծրագրերի վերաբերյալ շահակիցների տեղեկացվածության մակարդակը բարձրացնելով Հիմնադրամը՝

- Ունենում է ուսանողների, պրոֆեսորադասախոսական և վարչական կազմ, որը ակտիվ մասնակցում է միջազգային դրամաշնորհային/փոխանակման և այլ գիտական, կրթական ծրագրերին:
- Ունենում է ուսանողների, պրոֆեսորադասախոսական և վարչական կազմ որը ակտիվ ներգրավված է միջազգայնացման գործընթացներում **(Փոփ. կատ. են 26.02.2025թ., N1-02/25/1)**:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Ն.Ա.Միքայելյան**
Գիտական քարտուղար՝ **Լ.Գ.Այդինյան**